ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«07» փետրվար 2020թ. N 478 - Ա

Ընդհանուր բաժին
№ 0872
10 FEB 2020
09.50
Կից Նշումներ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 0103007920 առ 31.01.2020թ. փորձագիտական եզրակացությունը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Ընդհանուր հիմունքներով (նոր թողարկման ձև) գրանցման ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 2 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ նախարարի հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վ.Գաբրելյանին՝

1) Սույն հրամանը հրապարակել օրենքով սահմանված կարգով:

2) 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը Առողջապահության նախարարությանը:

3)Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ Վ. Գրիգորյանին՝

Ամսաթ. 07.02.20 ժ.16[20]

1) 2 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը նախարարի հաստատմանը և տրամադրել Փորձագիտական կենտրոնին:

5. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղերի վերաձևակերպված հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

07.02.2020

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2020թ. փետրվարի 07 - ի N 478 – Ա հրամանի

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ (ՆՈՐ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՁԵ) ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ

ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 162-Ն ԱՌ 28.02.2019 ՈՐՈՇՄԱՆ

| [illegible] | Առևտրային անվանում | Միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ | Դեղաձև | Դեղաչափ և թողարկման ձև (փաթեթավորում) | Արտադրող ֆիրման | Երկիր | Գրանցման հավաստագրի իրավատեր | Երկիր | Բաց թողման կարգ | Եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| . | Պլավիքս | կլոպիդոգրել (կլոպիդոգրելի հիդրոսուլֆատ) | դեղահատեր թաղանթապատ | 75մգ; (28/1x28/) բլիստերում | Սանոֆի Ուինթրոպ Ինդաստրի, 1, ռուե դե լա Վիերգե, Ամբարես էթ Լագրավե, 33565 Կարբոն Բլանկ ցեդեքս | Ֆրանսիա | Սանոֆի Ֆարմա Բրիստոլ-Մայերս Սքվիբ ЭսԷնՍի 174 Ավենյու դե Ֆրանս-Ֆ-75013 Փարիզ | Ֆրանսիա | Դ | 16916/1 31.01.2020 |
| '. | Բեպանթեն | դեքսպանթենոլ | քսուք | 50մգ/գ; 30գ ալյումինե պարկուճ, 100գ ալյումինե պարկուճ | ԳՊ Գրենցախ Պրոդուկտիոնս ԳմբՀ, Էմիլ-Բարել փ. 7, Դ-79639 Գրենցախ-Վիհլեն | Գերմանիա | Բայեր Քոնսումեր Քեյր ԱԳ, Փիթեր Մերիան փ. 84, 4052 Բազել | Շվեյցարիա | ԱԴ | 18643/1 31.01.2020 |